ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմա՝ Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը գրականության դասաժամերին

Կազմեց՝ Արմինե Ավետիսյան

<<Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

<<Կապանի թիվ 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը գրականության դասաժամերին

Այս աշխատանքում ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը գրականության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով , քննարկումներով, ազատ կարծիքների արտահայտմամբ, բանավեճերով իրականացվող ուսումնառությունը: Այն կօգնի բացահայտել գրական ստեղծագործության սյուժեի պատճառահետևանքային կապերը, կերպարների արարքների դրդապատճառները, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով քննադատական, վերլուծական հմտություններ:

Բանալի բառեր. տեղեկատվություն, քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողություն, պատճառահետևանքային կապ, բաց հարցեր, գնահատում, արժևորում, ճանաչողություն:

Սույն հետազոտության նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական մտածողության մաս են կազմում: Առաջադրված վարկածն է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնառությունը կարո՞ղ է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը:

Արդիականությունը: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, վերարտադրելը, այլև վերլուծելը, դատողություններ անելը, արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության որոշակի փոխանցելի հմտություններ:

Քննադատական մտածողություն –ապացուցումների համակարգ, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները:

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները: Քննադատական մտածողությունը մի «շնորհք» է, այն անհրաժեշտ և օգտակար է ոչ միայն մասնագիտական առումով, այլ նաև կյանքի բոլոր ոլորտներում:

Շատերը կարծում են, որ քննադատական մտածելակերպը՝

1. նույն անհամաձայնությունն է,
2. նպատակն է նվաստացնել դիմացինին և իշխող դեր տանել շրջապատում,
3. հանգեցնում է <<խայթելուն>>,
4. չի պահանջում ո՛չ երևակայություն, ո՛չ էլ ստեղծագործական մոտեցում,
5. կարող է կիրառվել միայն ուրիշների դիրքի և հավատքի հանդեպ:

Սրանք, իհարկե, սխալ մոտեցումներ են: Իրականում քննադատական մտածողությունը

1. չի նույնացվում անհամաձայնության հետ: Սրանց միջև կա ահռելի տարբերություն: Անհամաձայնությունը տեսակետների բաժանումն է: Երբ որևէ x անձի պնդումը հերքվում է y-ի կողմից: Սա քննադատման օրինակ չէ, այլ, պարզապես, միմյանց տեսակետների հերքում: Պետք է փնտրել փոխադարձ կարծիքների ձևավորման պատճառներ: Կարևորագույն պայմանը անձի հանդուրժողականությունն ու առողջ բանականությունն է:
2. Նպատակը դիմացինին շփոթեցնելը կամ նվաստացնելը չէ և մյուս կողմին թույլ չի տալիս իշխել: Քննադատական մտածելակերպն իրականում տալիս է իշխանության սահմանված որոշակիություն, միայն այն դեպքում, եթե անձը կարողանում է լիարժեք հիմնավորել և լուսաբանել իր տեսակետը և տա բավարար գոհունակություն: Այս ամենին պետք է գումարվի նաև դիմացինի անձի և տեսակետի հանդեպ հարգանքը և

ինքնատիրապետման դրսևորումը: Քննադատական մտածելակերպը գիտելիքային ռեսուրս ստանալու ամենալավ մեթոդներից է: Գիտելիքային ռեսուրսները հետագայում վերածվում են ուժի, սակայն անձը մշտապես պետք է գիտակցի, որ քննադատական մտածելակերպի տված ուժի հիմքը միայն ու միայն ճշմարտությունն է և հավատը:Քննադատական մտածելակերպի արդյունքը երբևէ չի հանգել դիմացինի կամքին բռնանալը կամ նվաստացնելը, կարծիք կամ տեսակետ պարտադրելը:

Քննադատական մտածողության նպատակն է տեսակետի արդարացիությունը: Տեսակետը արդարացի է, երբ լավագույն պատճառները դրան կողմ են, ոչ թե դեմ: Քննադատական մտածելակերպը օգնում է չափավորել յուրաքանչյուրիս տեսակետը: Երբ այն արդարացի է, մենք գիտենք, որ ունենք ամուր հիմք հավատալու մեր արածին(ասածին) և կարող ենք պաշտպանել մեր տեսակետը, եթե անհրաժեշտ է և ունենք օրինական իրավունք գործողության համար: Բայց երբեք չի կարելի արդարացնել տեսակետը դիմացինին նվաստացնելու կամ իշխելու գնով: Նրանք ,ովքեր մտածում են, որ կարելի է՝ բռնապետներ են, այլ ոչ թե քննադատական մտածողներ:

3. Քննադատական մտածողությունը չի հանգեցնում վիրավորելուն (խայթելուն):«Խայթող» անձը կախվում է մանրուքներից: Քննադատական մտածողին հետաքրքիրը նյութն է, ոչ թե մանրուքները: Քննադատորեն մտածելը պահանջում է խորքային վերլուծություն:

4. Քննադատական մտածողությունը պահանջում է տեղեկություններ և ստեղծագործականություն: Շատերը դիտում են քննադատական մտածելակերպը՝ որպես վերլուծության պարտադիր վարժություն: Չնայած այն իրոք պահանջում է վերլուծական մոտեցում, սակայն այն նաև կարելի է համարել ստեղծագործական մտածելակերպ, քանի որ երբեմն քննադատական մտածելակերպը պահանջում է ձևակերպել օրինակներ, որոնցով դիմացինի տեսակետը կասկածի տակ է դրվում: Քննադատական մտածողությունը ենթադրում է

1.**Խելացի** (նպատակահարմար) մտածելակերպ՝

Սա փաստերի և նպատակների տրամաբանական վերլուծությունն է, որը բացահայտում է խնդրի թաքնված միտքը: Որո՞նք են խնդրի բաղադրիչները, հետևանքները և

շարադասությունը, և ի՞նչ գործընթաց է իրականացվում խնդիրը լուծելու ընթացքում։ Դրանք հաճախ «ընդարձակ» հարցեր են և պահանջում են սովորողներից խնդրի փաստերը տրամաբանորեն կապել։ Հարցական բառերն են՝ ի՞նչ, ինչպե՞ս, ի՞նչ քայլերով։

2. **Արժևորող մտածելակերպ՝**

Այն պատկերացումները կապող, ճանաչող և արժևորող գործընթաց է, որն ազդում է ընկալման, վերլուծության և որոշում կայացնելու վրա։ Ի՞նչն է ձեզ համար ամենակարևորը և ինչու՞։ Սովորողները պետք է կարողանան եզրակացություն անել և համեմատել տվյալ իրավիճակը իրական կյանքի նման դրվագի հետ։ Հարցական բառերն են՝ ի՞նչ, ինչպե՞ս և ինչու՞։

Անընդհատ գործածելով այս հարցական տեխնիկան՝ աշակերտները զարգացնում են խնդիրը խոր ընկալելու և առողջ քննարկում կատարելու անհրաժեշտություններ։

Ջեյմս Քուփերը 2006-ին նշել է հարցադրումը արդյունավետ դարձնելու այսպիսի տարբերակներ.

- Քիչ հարց տալ,
- Օգտագործել դադարներ,
- Փոփոխել հարցերը,
- Ընտրել աշակերտներին,
- Խորաթափանց հարցեր տալ,
- Ընդհանուր պատկերը բնորոշող հարցեր տալ։

Հարցեր տալու տեխնիկան ինձ շատ է օգնում մանկավարժական գործունեության ընթացքում։ Որպես ուսուցիչ՝ մենք պետք է խթանենք աշակերտներին մտածել և եզրակացություններ անելը, ոչ թէ կրկնել մեր ասածը, կամ պարզապես անգիր անել։

Քննադատորեն մտածելը և ճիշտ հարցադրում օգտագործելը դասարանում, իհարկե, կարևոր և անհրաժեշտ պայմաններ են որակյալ դասընթաց ապահովելու համար, սակայն կա մի շատ պարզ, բայց կարևոր հմտություն, առանց որի վերոհիշյալ գործոնները արդյունք չեն տա։

Ինչպե՞ս ապահովել քննարկումներ դասարանում։

Հետազոտությունը ցույց է տալիս, որ աշակերտների՝ դասարանում քննարկումներին չմասնակցելու հիմնական պատճառը վախն է, որ ուսուցիչը և այլ աշակերտներ կընդունեն իր պատասխանը որպես սխալ կամ անկարևոր: Այլ պատճառներն են ցածր ինքնագնահատականը, սխալվելու վախը, ամաչկոտությունը և վեճերից խուսափելը: Երբ դասարանում չի հաջողվում ապահովել ակտիվ մասնակցություն , պետք է փոխել մոտեցումը, ստեղծել այնպիսի միջավայր, որ աշակերտները իրենց ապահով զգան և կարողանան օգտագործել իրենց ներուժը :

Ահա մի քանի տարբերակ դրան հասնելու համար.

1. Ստեղծենք դրական, հանգիստ, «ես կարող եմ» միջավայր դասարանում:

Աշակերտներն արագ արձագանքում են ազնիվ և պարզ վերաբերմունքին : Ժպտացեք և մի մնացեք նույն դիրքում դասը վարելիս: Քայլեք դասարանով և հետաքրքրություն ցուցաբերեք յուրաքանչյուր աշակերտի գործունեությանը: Բարձրացնելով վստահության մակարդակը դասարանում՝ դուք նաև կբարձրացնեք աշակերտների ակտիվ մասնակցության մակարդակը:

2. Սահմանափակեք ձեր արձագանքը և թույլ տվեք աշակերտը լուսաբանի իր միտքը: Օգտագործեք այլ աշակերտների մեկնաբանությունները տվյալ հարցի շուրջ և ընդգծեք , որ արժևորում եք նրանց կարծիքը: Քաջալերեք աշակերտներին մտածել քննադատորեն և առողջ բանավեճ անցկացներ քննարկվող հարցի շուրջ:

3. Կազմակերպեք զույգերով աշխատանքներ, ինչը աշակերտներին կտա ավելի ապահով միջավայրի զգացողություն և հետագայում աստիճանաբար մեծացրեք խմբերը: Ամաչկոտ աշակերտները քայլ առ քայլ ձեռք կբերեն վստահություն և կսկսեն ավելի ակտիվ մասնակցել դասընթացին:

4. Դասարանում թեմայի ընտրությունը պետք է համապատասխանեցնել աշակերտների նախասիրությունները: Կարելի է առաջարկել մի քանի թեմա և թույլ տալ աշակերտներն ընտրեն իրենց նախասիրությանն առավել մոտ թեման:

5. Քաջալերեք աշակերտներին գրանցումներ անել, ինչը կօգնի անդրադարձ կատարելուն:

Ստորև կցվում է 8-րդ դասարանի դասի պլան, որում ևս ապահովվել եմ քննադատական մտածողության զարգացման նախադրյալները և վերոնշյալ կետերը.

Առարկա-գրականություն

Դասարան-8

Թեմա-Նար-Դոս <<Ես և նա>> պատմվածքը

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակները

Ա/Ակադեմիական՝

- Իմանալ հատվածի բովանդակությունը
- Ներկայացնել կերպարները, վերլուծել։

Բ/Սոցիալական՝

- Պատկերավոր մտածողության
- Լսելու
- Տրամաբանելու
- Համագործակցելու
- Ընկալածը վերարտադրելու
- Աշխարհայացք վերարտադրելու

Անհրաժեշտ պարագաներ՝ դասագիրք, գրատախտակ, A4 չափի թղթեր՝ քառաբաժնի հարցերով։

Ցուցադրական նյութեր՝ հեղինակի նկարը, պաստառներ։

Մեթոդներ, աշխատանքի ձևեր և եղանակներ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, պրիզմա, քառաբաժան, անհատական աշխատանք։

Հիմնական հասկացություններ՝ հիասթափություն, կամքի ուժ, զգացմունք, իրավաբանություն

Խնդիրները- 1. Խթանել աշակերտների քննադատական մտածողությունը

2. կիրառել միջառարկայական կապեր

3. հաշվի առնել աշակերտների տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունները

4. դասին ներգրավել բոլոր աշակերտներին:

Դասի ընթացքը

Խթանման փուլի նկարագրությունը

Ուսուցիչը գրատախտակին գրում է <<Կորուստ>> բառը: Մտագրոհի միջոցով հարցեր է ուղղում դասարանին՝ խոսելով մարդկային զգացմունքների՝ սիրո, հիասթափության, կորուստի և դրանց հետևանքների մասին: Կազմում են պրիզմա:



Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը

Այս փուլում հնչում է ուսուցչի կենդանի խոսքը: Համառոտ ներկայացնում է պատմվածքի արտահայտած գաղափարը:

Կյանքը հեքիաթ չէ, ամեն ինչ չի մատուցվում սկուտեղի վրա, ճակատագիրը կարող է ամենաանսպասելի պարագաներում մեզ տհաճ անակնկալներ մատուցել, ու այդ պահին կարող է թվալ թե աշխարհը մեզնից երես է թեքել, մենք կարող ենք մեզ դժբախտ զգալ, ապագան կթվա մշուշոտ և անհրապույր, և միայն կամային բարձր հատկություններ, հոգու տոկունություն, նպատակասլացություն ունենալու դեպքում մենք անկասկած կհաղթահարենք այդ դժվարությունը, ու մենք կհաղթենք, իսկ կյանքը սիրում է հաղթողներին:

Ապա լսում են աուդիոնյութ, որը պատմում է Նար-Դոսի <<Ես ու Նա>> պատմվածքը:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը

Քառաբաժնի օգնությամբ գրառում են իրենց տպավորությունները։

Ի՞նչ էիք տեսնում տեքստը լսելիս	Ի՞նչ էիք զգում տեքստը լսելիս
Ի՞նչ լսեցիր հատվածը լսելիս	Դի՛ր նոր վերնագիր և ավարտ

Դասի արդյունքում խթանվեցին աշակերտների քննադատական մտածողության հմտությունները։

Քննադատական մտածողության հմտությունները կազմված են այն հմտություններից, որոնք պահանջվում են ցանկացած տեսակի նյութի մասին դատողություններ անելու և գնահատելու համար։ Ըստ այդմ, դրանք ներառում են հետևյալ ունակությունները կամ հմտությունները՝

- ✓ գնահատումներ կատարել
- ✓ դատողություններ անել
- ✓ ընկալել և գնահատել
- ✓ առաջ քաշել և մշակել տարբեր այլընտրանքային տարբերակներ, հնարավորություններ ու լուծումներ
- ✓ կշռադատել առկա տարբերակների առավելությունները և թերությունները.
- ✓ տրամաբանական և հիմնավոր փաստարկներ առաջ քաշել
- ✓ գնահատողական գործընթացում ճանաչել սեփական կողմնակալ ենթադրությունները և կանխակալ կարծիքները և ընդունել, որ սեփական համոզմունքներն ու դատողությունները միշտ էլ պայմանական են ու կախված են սեփական մշակութային պատկանելությունից և տեսակետից։

Այսպիսով, քննադատական մտածողությունը մտածողության տեսակ է, որը

. Ներառում է փաստը տարբեր տեսանկյունից դիտելու ունակություն:

. տարբեր երևույթների պատճառները գնահատելու ունակությունն է:

. Քննադատական մտածողությունը ենթադրում է նաև ազնվություն այն իմաստով, որ մենք չպետք է հուզականորեն կողմնորոշվենք որևէ իրավիճակի նկատմամբ. զգացմունքայնորեն կողմնակալ դառնալով ՝ մենք դիմում ենք ինքնախաբեության: Փոխարենը, նման պահերին մենք պետք է մտածենք առանց նախապաշարմունքների: Ուսուցչի խնդիրն է նաև խթանել աշակերտի ազատ մտածողությունը՝ անկախ իր՝ ուսուցչի տեսակետից:

. Քննադատական մտածողությունը օգնում է աշակերտին արդյունավետորեն լուծել խնդիրները:

Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

• կանխորոշում են ուսումնառության նպատակները, շոշափելի արդյունքները

•հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,

• նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը, • նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,

• նպաստում են անհատականության ձևավորմանը

•ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման այլընտրանքային ուղիները տեսնելու կարողությունը:

Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական, և՛ բացասական վերաբերմունք: ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը:

Մանկավարժական գործունեության ընթացքում միշտ կարևորել եմ աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը, գրական ստեղծագործության ոչ թե վերլուծականի կամ սյուժեի վերարտադրումը, այլ

սեփական մեկնաբանություններն ու հիմնավորված տեսակետներ արտահայտելը: Իմ և ուրիշ մանկավարժների դիտարկումները ցույց են տալիս, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են փաստի, սյուժեի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում սյուժե կազմող գործողությունների, դրվագների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների , կերպարների արարքների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, ազատ մտածել, գնահատել փաստերն ու երևույթները. կառչում եմ ուսուցչի տեսակետից կամ վերլուծական գրականությունից կամ էլ ուսման մեջ առաջավոր դասընկերոջ կարծիքից: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ: Դրա համար աշակերտին պետք է սովորեցնել մտածել:

Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել ՔՄ-ը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և տարբեր ոլորտներում: Դժվար է գտնել ՔՄ այնպիսի ոլորտ, որին հնարավոր չլինի տիրապետել:

ՈՒսումնասիրություններում նշվել է նաև, որ խնդիրներ լուծելիս կիրառում են տարբեր մոտեցումներ, ինչպիսիք են ավելորդ փաստերի բացառումը, ինֆորմացիայի աղբյուրի հուսալիության գնահատումը: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ գիտելիքները, որոնց ստացման ժամանակ տրվում են մտածողության ընդհանուր կանոններ, կարող են փոխադրվել նաև գործունեության այլ ոլորտներ:

Քննադատական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է

ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ տեղեկատվության և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամաբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման : Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ պատճառով եղավ այս կամ այն բանը, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում, Ի՞նչ այլ սյուժետիկ լուծումներ կառաջարկեիք կամ ի՞նչ նոր վերջաբան կարելի է մտածել….: Այսօրինակ հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի մշակած աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: Ինչպես նաև Սանդերսի հիշողությունփոխակերպում-մեկնաբանում-կիրառություն-վերլուծությունհամադրում-գնահատում համակարգում այս հարցերը դիտվում են իբրև հարցադրումների ամենաբարձր մակարդակ : Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Կարոևրվում են ոչ միայն հիշողությունն ու ուշադրությունը, այլև վերլուծական–համադրական կարողությունները : Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Դասարանում ճիշտ հարցադրում

կատարելը դժվար գործողություն է, որը պահանջում է քրտնաջան աշխատանք և խոր վերլուծություն, բայց դրա տված արդյունքը շոշափելի է և ոգևորող։

Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը։ Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը։ Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ։ Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից։ Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում է այն, ինչ արդեն իսկ գիտենք, և ընկած է մեր գիտելիքի հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ մենք ուզում ենք իմանալ [1]

Ճանաչողության գործընթացում կարևոր է ֆիքսել այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել, բայց պետք նաև ֆիքսել այն, ինչը մենք դեռևս չգիտենք և ենթակա է պարզվելու։ Այդպիսիք են հենց հարցերը։ Հարցի կառուցվածքը հասկանալու համար նախ պետք է առանձնացնել այն, ինչ մենք արդեն գիտենք։ Մեր իմացածի հիման վրա էլ արդեն կարելի է ձևակերպել հարցը։ Հարցը՝ որպես ճանաչողության ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ– որ հայտնի փաստի վրա։ Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը։ Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը։ Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը։ Պիտի ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, գտնել օրինաչափությունները, սահմանել պատմական երևույթների ու գործընթացների բնույթն ու նշանակությունը,պատրաստ է լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ։Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ,

ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Բաժինը՝ Հայրենի բնաշխարհ

Թեմաները՝ Ա/ Ավ. Իսահակյան <<Արագածին>>

Գեղարվեստական և գիտական խոսք

Նպատակները՝

1. առարկայական/ ակադեմիական/

Աշակերտը կսովորի և կիմանա՝

- ❖ տեղեկություններ Ավ. Իսահակյանի կյանքի և գործի մասին
- ❖ բանաստեղծության գաղափարական բովանդակությունը
- ❖ շրջակա աշխարհի մասին /Արագած լեռը/
- ❖ գեղարվեստական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները
- ❖ գիտական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները

Աշակերտը կկարողանա

- ❖ պատմել Ավ. Իսահակյանի մասին
- ❖ բանավոր և գրավոր խոսք կազմել

2. ընդհանուր զարգացում

- ❖ երևակայության, պատկերավոր մտածողության զարգացում

Ուսումնական նյութեր՝ Ավ. Իսահակյանի դիմանկարը, Արագած լեռը պատկերող սահիկներ, Մարտիրոս Սարյանի կտավներից, երաժշտություն։

Կիրառվող մեթոդներ՝ <<Դասախոսություն>>, դերային խաղ։

Նախապատրաստական աշխատանք. նախօրոք դասարանը բաժանվում է խմբերի՝ զեկուցողներ, գրականագիտական տեղեկություններ հաղորդողներ, 3-րդ խումբը կներկայացնի Ստ. Կուրտիկյանի <<Արագածի չորս կատարները>> ավանդազրույցը՝ դերային խաղի միջոցով՝, 4-րդ խումբը պետք է պատրաստվի Ավ. Իսահակյանի <<Արագածին>> բանաստեղծության վերլուծությանը։

Դասի ընթացքը

Խթանում

Դասարանում փակված են աշակերտների՝ Արագածի նկարազարդումներից, Ավ. Իսահակյանի դիմանկարը։

Վերջում տալիս եմ հարցեր

Դուք ներկայացրեցիք Արագած լեռը գիտական և գեղարվեստական խոսքի միջոցով, լսեցիք երգ, դիտեցիք նկարչի ստեղծագործություն։

Դուք ինչպե՞ս, ի՞նչ միջոց կընտրեք Արագածը նկարագրելու համար։

Վերջում տրվում է անհատական տնային հանձնարարություն. գրել գիտական կամ գեղարվեստական շարադրանք՝ <<Արագած>>, <<Արագածին>> բանաստեղծության նկարազարդում։

Դասի պլան

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ	Թվականի տեսակները
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	*1.* **<u>Ակադեմիական</u>** • խորացնել գիտելիքները թվականի վերաբերյալ • իմանալ տեսակները, կազմության և գրության սկզբունքները • տարբերակել թվային իմաստ և հատկանիշ արտահայտող այլ խոսքի մասերից *2.* **<u>Սոցիալական</u>** • ձևավորել խմբում աշխատելու համագործակցային տարրեր (Լսելու, օգնելու, խրախուսելու) • միջառարկայական կապեր ստեղծելու կարողության ձևավորում • գեղեցիկ, պատկերավոր խոսելու ունակության ձևավորում
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	• տարբերակել խոսքի մասերի առանձնահատկությունները • հաղորդակցության ընթացքում լեզվական միջոցների, կառույցների, լեզվական օրինաչափությունների և կանոնների գիտակցում
Դասից հետո աշակերտները կիմանան	• թվականի սահմանումը, տեսակները, տարբերությունները • թվականի որպես հատկանիշ արտահայտող խոսքի մաս լինելը • թվականների տարբեր տեսակների կազմությունը և գրությունը
Դասից հետո աշակերտները կկարողանան	• տարբերակել հատկանիշ և թվային իմաստ արտահայտող մյուս խոսքի մասերից • գործածել խոսքում առածներ, իմաստություններ թվականների գործածությամբ • ճիշտ գրել և գործածել թվականները
	<u>Դասի ընթացքը</u>
Ուսումնական նյութեր	Դասագրքեր, տետրեր, պլակատ, թվականի տեսակներին վերաբերող պաստառներ, աղյուսակներ
Հիմնական	Թվական, տեսակները, կազմությունը, կիրառությունը

հասկացություններ	
<u>Դասի կառուցվածքը</u> **Մեթոդներ**	 ԽԻԿ-Մտագրոհ, հետազոտական աշխատանք, զրույց-դասախոսություն, հասկացության քարտեզագրում
Տևողությունը	1 դասաժամ
Խթանման փուլ	10 րոպե Գրատախտակին գրել «Կողպեքի վրա քառասուն հանգույց կգցի» առածը և ուղղորդված հարց տալ. «Ուրիշ ի՞նչ առածներ գիտեք թվականների գործածությամբ»: Բացատրել իմաստները, գրառել տետրերում:
Իմաստի ընկալման փուլ	25 րոպե Դասարանը բաժանել 4 խմբի (համարակալման սկզբունքով՝ 1.2.3.4.): Կարճ զրույց-դասախոսությունից հետո հանձնարարել «Հետազոտական աշխատանք»՝ թվականի տեսակները, կազմությունը, կիրառությունը թեմայով՝ օգտագործելով տարբեր դասագրքեր: 1-ին խումբ - «Աշխարհագրություն» դասագրքից դուրս գրել բացարձակ թվականներով կիրառություններ, բացատրել կազմությունը: 2-րդ խումբ - «Պատմություն» դասագրքից դուրս գրել դասական թվականներով կիրառություններ, բացատրել կիրառությունները: 3-րդ խումբ - <<Գրականություն>> դասագրքից դուրս գրել բաշխական և մոտավոր թվականներ: 4-րդ խումբ - «Մաթեմատիկա» դասագրքից դուրս գրել կոտորակային թվականներով կիրառություններ: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը: Խրախուսվում են:
Կշռադատման փուլ Անդրադարձ և տնային հանձնարարություն	 5 րոպե Գրատախտակին «Հասկացության քարտեզագրում» մեթոդով համակարգվում են ձեռք բերված գիտելիքները: Յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ բերվում են օրինակներ: 5 րոպե Հարցերի տարափով կատարել անդրադարձ, գնահատել: Դասագրքի վարժություններից հանձնարարել տնային աշխատանք:

Եզրահանգում

Այսպիսով, գրականության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի գրական ստեղծագործությունների բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել *քննադատական մտածողության* հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում գրական ստեղծագործությունների համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

ՕԳՏԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՇԽԱՐՀՏԵՂԻ ՔԱՆՈՍՏԱԿԱՆ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՊՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Հայաստանի Ռ. Ս.

2. Аверьянов Л. Я. Социология: искусство задавать вопросы. Издание 2-е, переработанное и дополненное. Москва. Изд.-во “Москва” 998. 195 с.

3. Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”. 1982. 191 с.

4. Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.

5. Халперн Д.Ф. Психология критического мышления. СанктПетербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с.

6. Iibarmedu.am կայք